



Պ.Ս. Ավետիսյան

«16» դեկտեմբերի 2025թ.

**ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԿԱՐԾԻՔ**

Սիրո Հրաչի Ամիրխանյանի՝ «Հանրային իրավունքի իրավաբանական անձինք՝ որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ» վերտառությամբ ԺԲ.00.03-«Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Աշխատանքը նվիրված է հանրային իրավունքի իրավաբանական անձանց տարանջատման հիմնավորմանը, դրանց բնորոշ հատկանիշների և տեսակների բացահայտմանը, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններում դրանց մասնակցության ապահովմանը:

ՀՀ սահմանադրության 2015թ.-ի փոփոխություններով հայրենական իրավական համակարգ ներդրվեց «հանրային իրավունքի իրավաբանական անձ» տերմինը: Մասնավորապես, ՀՀ սահմանադրության 180-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվեց՝ «Համայնքը հանրային իրավունքի իրավաբանական անձ է»: Նույն կերպ միջհամայնքային միավորումների վերաբերյալ ՀՀ սահմանադրության 189-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվեց՝ «Միջհամայնքային միավորումը հանրային իրավունքի իրավաբանական անձ է»:

Հարկ է նշել, որ թեման համահունչ է սահմանադրաիրավական կարգավորումներին, իսկ վերջինիս արդիականությունը կասկած չի հարուցում, քանի որ հանրային իրավունքի իրավաբանական անձանց մասնակցությունը քաղաքացիական շրջանառությանը օրեցօր ընդլայնվում է, ինչը պայմանավորված է պետական կառավարման ձևերի զարգացմամբ, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների տնտեսական ակտիվությամբ, ինչպես նաև հանրային ծառայությունների մատուցման նոր մոդելներով:

Ժամանակակից պայմաններում պետությունը, համայնքները և այլ հանրային կազմավորումներ ոչ միայն իրականացնում են հանրային իշխանություն, այլև հաճախ հանդես են գալիս որպես հավասար կողմեր մասնավոր անձանց հետ քաղաքացիական հարաբերություններում՝ կնքելով գործարքներ, ձեռք բերելով գույքային իրավունքներ և կրելով պարտավորություններ: Այս հանգամանքը պահանջում է դրանց քաղաքացիական իրավունակության, պատասխանատվության և մասնավոր իրավունքի շրջանակներում դրանց կարգավիճակի խորացված ուսումնասիրություն:

Կատարված աշխատանքով հեղինակը հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ գիտական ուսումնասիրության առարկա է դարձրել հանրային իրավունքի իրավաբանական անձանց՝ որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտների, հիմնավորել է մասնավոր իրավունքի իրավաբանական անձանցից տարանջատման անհրաժեշտությունը, առանձնացրել է դրանց հատկանիշները, սահմանել է հասկացությունը, հստակեցրել հանրային իրավունքի իրավաբանական անձանց տեսակներն ու քաղաքացիական իրավասուբյեկտությանը վերաբերող հարցերը, և հատկապես պատասխանատվությանն առնչվող հարցերը:

Հեղինակը կատարված ուսումնասիրությամբ հենվել է հայրենական և արտասահմանյան տասից ավելի երկրների իրավաբան-գիտնականների տեսական դատաողությունների և իրավական կարգավորումների վրա, ինչպես նաև կատարել է կարևոր նշանակություն ունեցող եզրահանգումներ և առաջարկներ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, ինը պարագրաֆներից, ինչպես նաև օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքի առաջին գլխի առաջին պարագրաֆում՝ հեղինակը, հիմք ընդունելով միջազգային իրավական զարգացումներն ու ներպետական օրենսդրական փոփոխությունների հայեցակարգային մոտեցումները, ինչպես նաև հիմնավորել է հանրային և մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց տարանջատման անհրաժեշտությունը՝ միաժամանակ հիմնվելով արտասահմանյան երկրներում հանրային իրավունքի իրավաբանական անձանց օրենսդրական և դոկտրինալ տեսակների, դրանց հատկանիշների, ինչպես նաև տեսության մեջ առկա և օրենսդրական մակարդակով ամրագրված սահմանումների վրա:

Աշխատանքում վեր է հանվել հանրային իրավունքի իրավաբանական անձանց հատկանիշները և տրվել է հանրային իրավունքի իրավաբանական անձի հասկացության բանաձևումը՝ որպես էական հատկանիշներ առանջնադրելով համապատասխան նորմատիվ իրավական ակտով դրա հիման վրա հիմնադրված լինելը, հանրային-իրավական կազմավորում լինելը, կազմակերպական միասնություն ունենալը, պատասխանատվություն կրելու հնարավորությունը և այլն:

Աշխատանքի առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ հեղինակը մանրամասն ուսումնասիրել է հանրային իրավունքի իրավաբանական անձանց տեսակներն արտասահմանյան երկրների մասնավորապես՝ Գերմանիայի, Ֆրանսիայի, Իսպանիայի, Վենեսուելայի, Ռուսաստանի, Վրաստանի, Ուկրաինայի, Մոլդովայի և այլ երկրների օրենսդրությունների ինչպես նաև տեսական գրականության մեջ, որի հաշվառմամբ արձանագրվել է, որ հանրային իրավունքի իրավաբանական անձանց տեսակները գրեթե բոլոր երկրներում տարբեր են, և դրանք ազգային համակարգում ներառելիս չպետք է մեխանիկորեն փոխառել: Յուրաքանչյուր երկրի ազգային համակարգ, ելնելով պատմական ավանդույթներից, դոկտրինալ մեկնաբանություններից և օրենսդրի կամքից, կարող է հանդես գալ նշանակալից ինքնուրույնությամբ և չներառել այս կամ այն տեսակի՝ ընդհանուր տեսական իմաստով հանրային իրավաբանական անձը հանրային իրավունքի իրավաբանական անձանց շարքում:

Կատարված ուսումնասիրության արդյունքներով երկրորդ գլխում առանձնացվել են այն կազմավորումները, որոնք առաջարկվել է Հայաստանի Հանրապետությունում դիտարկել հանրային իրավունքի իրավաբանական անձանց վերաբերյալ: Ըստ այդեմ հեղինակի կողմից

առաջարկվել է որպես այդպիսին դիտարկել 1. պետությունը, 2. վարչատարածքային միավորները (համայնք և մարզ), 3. ՀՀ կենտրոնական բանկը, 4. բյուջետային հիմնարկները (պետության և համայնքի բյուջեներից ֆինանսավորվող հիմնարկները)¹, 5. հանրային-իրավական կազմավորումների կողմից ստեղծվող և վերահսկվող ոչ առևտրային կազմակերպությունները (պետական ոչ առևտրային կազմակերպություններ, պետության կամ կենտրոնական բանկի հիմնադրած հիմնադրամներ և այլն) և պարտադիր անդամակցության սկզբունքի հիման վրա գործող ինքնակարգավորվող կազմակերպությունները (մասնագիտական միությունները):

Աշխատանքի երրորդ գլխի առաջին պարագրաֆում ուսումնասիրվել և վերլուծվել է հանրային իրավունք իրավաբանական անձանց իրավասությունների առանձնահատկությունները, մասնավորապես՝ իրավասությունների կազմը, ծագման պահը և տեսակը: Արդյունքում հիմնավորվել է, որ նրանց իրավասությունները ունի 3 տարր՝ իրավունակություն, գործունակություն և դեյիկտունակություն: Հիմնավորվել է, որ վերջիններիս իրավասությունները ծագում է համապատասխան նորմատիվ իրավական ակտի (որի հիման վրա նրանք հիմնադրվում են) ուժի մեջ մտնելու կամ պետական գրանցման պահից, իսկ այն դեպքերում, երբ հանրային իրավական կազմավորումը որոշակի գործառույթների կատարումը կկապի որևէ մարմնի հետ՝ նրա մոտ այդ մասով գործունակությունը կծագի համապատասխան համապատասխան մարմնին հիմնադրելու պահից: Միաժամանակ հիմնավորվել է, որ հանրային իրավունքի իրավաբանական անձինք (այդ թվում նաև պետությունը) հանդիսանում են նպատակային կազմակերպություններ և հետևաբար ունեն քաղաքացիաիրավական հատուկ իրավասություններ:

Աշխատանքի երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում հեղինակը ուսումնասիրել է հանրային իրավունքի իրավաբանական անձանց պատասխանատվության առանձնահատկությունները և հիմք ընդունելով միջազգային իրավական զարգացումները, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի առաջադեմ մոտեցումները՝ հիմնավորել է, որ հանրային իրավունքի իրավաբանական անձինք կրում են ինքնուրույն գույքային պատասխանատվություն, սակայն նրանց հիմնադիրները պատասխանատու են իրենց հիմնադրած պետական կազմակերպություն

համարվող հանրային իրավունքի իրավաբանական անձանց պարտավորություններով, եթե հանրային իրավական կազմավորումը չի ապացուցի այդ սուբյեկտների ինստիտուցիոնալ և օպերատիվ (գործառության) անկախությունը:

Ամփոփելով վերոգրյալը կարելի է փաստել, որ հեղինակը կատարել է կարևոր գիտապրակտիկ նշանակություն ունեցող եզրահանգումներ, մշակել է տեսական հասկացություններ և ներկայացրել օրենսդրական բարեփոխումների գործնական առաջարկներ:

Ատենախոսության ուսումնասիրությունը վկայում է, որ հեղինակը կատարել է թեմայի շրջանակներում համալիր և ավարտուն աշխատանք՝ նպաստելով սույն թեմայի շրջանակներում հայ իրավագիտական մտքի զարգացմանը:

Աշխատանքի հիմնական դրույթները արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված թվով 8 գիտական հոդվածներում, ինչպես նաև սեղմագրում:

Ատենախոսության և սեղմագրի ծավալն ու ձևավորումը համապատասխանում են ԲԿԳԿ-ի կողմից սահմանված կանոններին:

Այնուամենայնիվ, կարծում եմ ատենախոսության մեջ առկա են առանձին վիճելի եզրահանգումներ, որոնք կայանում են հետևյալում:

1. Պաշտպանության ներկայացվող 2-րդ դրույթում հեղինակը նշում է. «Կատարված ուսումնասիրությամբ, հաշվի առնելով մեր կողմից վեր հանված հանրային իրավունքի իրավաբանական անձանց բնորոշ հատկանիշները, տեսական գրականության մեջ արտահայտված կարծիքները, ինչպես նաև մի շարք երկրների փորձը՝ առաջարկվում է տալ հանրային իրավունքի իրավաբանական անձանց հետևյալ բանաձևումը. «Հանրային իրավունքի իրավաբանական անձը համապատասխան նորմատիվ իրավական ակտով կամ դրա հիման վրա հիմնադրված հանրային-իրավական կազմակերպություն է, որն ունի անվանում, ունի իրավունքներ ու պարտականություններ, կրում է պատասխանատվություն իր իրավական ակտերի և գործողությունների համար, ունի հանրային-իշխանական լիազորություններ կամ կապված է հանրային իշխանության հետ և իրականացնում է ֆինանսական, քաղաքական, պետական, սոցիալական, կրթական, մշակութային կամ այլ հանրային գործունեություն»:

Միևնույն ժամանակ պաշտպանության ներկայացվող 3-րդ դրույթով հեղինակը առաջարկել է ՀՀ-ում հանրային իրավունքի իրավաբանական անձ դիտարկել հանրային-իրավական կազմավորումների կողմից ստեղծվող և վերահսկվող ոչ առևտրային կազմակերպությունները (պետական ոչ առևտրային կազմակերպություններ, պետության կամ կենտրոնական բանկի հիմնադրած հիմնադրամներ և այլն) և պարտադիր անդամակցության սկզբունքի հիման վրա գործող ինքնակարգավորվող կազմակերպությունները (մասնագիտական միությունները):

Ցանկալի կլիներ, որ հեղինակը հիմնավորեր, թե ներկայացված դրույթների համատեքստում ինչպես է արտացոլվում մասնագիտական միությունների հարային-իշխանական լիազորությունները կամ հանրային իշխանության հետ կապը:

2. Պաշտպանության ներկայացվող 6-րդ դրույթում հեղինակը նշում է, որ «Կատարված ուսումնասիրությամբ, հաշվի առնելով մեր կողմից վեր հանված հանրային իրավունքի իրավաբանական անձանց բնորոշ հատկանիշները, ուսումնասիրելով արտասահմանյան երկրների օրենսդրական կարգավորումները, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումները պատասխանատվության մասին՝ առաջարկում ենք, սահմանել, որ հանրային իրավունքի իրավաբանական անձինք կրում են ինքնուրույն գույքային պատասխանատվություն, սակայն պետությունը, ինչպես նաև համայնքը պատասխանատու են հանրային իրավունքի իրավաբանական անձանց պարտավորություններով (անգամ այն դեպքում, երբ ազգային օրենսդիրը սահմանում է, որ իրավաբանական անձի հիմադիրը պատասխանատու չէ իրավաբանական անձի պարտավորությունների համար), եթե հանրային իրավական կազմավորումը չի ապացուցի այդ սուբյեկտների ինստիտուցիոնալ և օպերատիվ (գործառության) անկախությունը:

Գտնում ենք, որ եվրոպական դատարանի մոտեցումները չեն վերաբերում հանրային իրավունքի իրավաբանական անձանց, հաշվի առնելով, որ դատական ակտերում չկան դրա մասին վկայող ուղղակի ձևակերպումներ, կարծում ենք՝ հանրային իրավունքի իրավաբանական անձինք կրում են ինքնուրույն գույքային պատասխանատվություն՝ իրենց պատկանող գույքի սահմաններում, որն էլ բխում է իրավաբանական անձի՝ որպես քաղաքացիական

շրջանառությանը մասնակցող անձի ինքնուրույն գույքային պատասխանատվության կրելու հատկանիշից:

Վերը նշված դիտողություններն, այնուամենայնիվ, կրում են մեթոդաբանական, բանավիճային բնույթ, և ամենևին չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժանիքները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Սիրո Հրաչի Ամիրխանյանի «Հանրային իրավունքի իրավաբանական անձինք՝ որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ» վերտառությամբ ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման՝ ԺԲ.00.03 - «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)» մասնագիտությամբ:

Հայ-ռուսական համալսարանի իրավունքի

ինստիտուտի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության

իրավունքի ամբիոնի ավագ դասախոս,

իրավաբանական գիտությունների թեկնածու՝

Կարինա Հովհաննիսյան

Հաստատում եմ՝

ՀՈՀ գիտքարտուղար

Կրտսեպաբուր

Բ.Տ.Բ.

